



Մեծ ակոբ արադեանց

ԱՐԶԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՁԵԿՈՒՅՑՆԵՐ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱՍՍՏՐԱՆ

ՀՏԴ 82.0
ԳՄԴ 83.3
Հ 176

Այս գրքին
հրատարակութեան հովանաւորն է
Թորոնթոյի
Համազգային Հայ Կրթական և
Մշակութային Միութեան
«Գլաժոր» մասնաճիւղի հիմնած
«Յակոբ Կարապենց»ի անուան
հրատարակչական Ֆոնտը
Թորոնթօ 2022

Միջազգային գիտաժողով նվիրված
Հակոբ Կարապենցին

Հակոբ Կարապենց: Ձեկույցների ժողովա-
ծու.:
Հ 176 Եր.: Լուսակն, 2022.- 308 էջ:

ՀՏԴ 82.0
ԳՄԴ 83.3

ISBN 978-9939-899-11-4

© Համազգային հայ կրթական և մշակութային միություն, 2022 թ.
© Լուսակն, 2022 թ.

ԱՌՋԱՉԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
նվիրված

ՄԻ ԿՈՐԲ
ԱՐԱՊԵՆՑԻՆ

Ձեկույցների ժողովածու



Համազգային
հայ կրթական
և մշակութային
միություն



Երևանի
պետական
համալսարան

Երևան
2022

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ /Հայաստան/

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱԶԳԱՅԻՆ
ՅԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԸ
ՈՐՊԵՍ ԸՆՏԱՆԻՔԻ
ՊԱՅՊԱՆՄԱՆ ՅԻԱՐ
«ԱՌԱՄԻ ԳԻՐՔԸ»
ՎԵՊՈՒՄ

«... իմաստությունը մեկ բառի մեջ խորացրած, վարչապետ ու նախագահ խաղացնող, սակայն մանուկներից խաբուող, լուրջ բարի տառապած կոշոր ու բիրտը... հայերը, հայերի ընտանիքը, թող հազար յեղափոխություն լինի, կը մնայ ընտանիքի սրբությունը»¹:

Հակոբ Կարապետյանի «Աղամի գիրքը» ինքնակենսագրական վեպը նաև ընտանիքի, տոհմի ու գերդաստանը կազմող անհատների մասին է: Գրքում ներկայացված որոշ ընտանիքներ շեղվել են ավանդական հայկական ազգային սովորույթներից, ինչն էլ արդեն որբերգություն է: Որքան էլ ժամանակների պահանջով հասարակությունը նորաոճ դառնա, միևնույնն է, վաղ թե ուշ վերադարձը ակունքներին չի ուշանալու, այն ապրելու պահանջ է: Իսկ ապրելու ու արարելու համար մեծ ժառանգություն պետք չէ հայ մարդուն: Հրանտ Մաթևոսյանի խոսքով « մի զույգ ձեռք, մի ընկեր կին, անունը դնենք Նանի, ու մի հայոց լեզու»²:

1 Հ. Կարապետյան, Աղամի գիրքը, Երևան, 2012, էջ 108: Այս գրքից հաջորդ հղումները կնշվեն շարադրանքի մեջ:
2 Հ. Մաթևոսյան, Սպիտակ թղթի առջև, Երևան, 2004, էջ 5:

Առանց հիշողության մարդը ոչինչ է, սոսկ կենսաբանական միավոր, առանց հիշողության ազգ ու ժողովուրդ չի հարատևի, իսկ ժամանակի պապակ ավազուտներում կցամաքի տոհմի անապակ արյունը: Կիանոզի անհիշատակ:

Վեպի հերոս Աղամ Նուրյանի պատկերով թափառական դարձած, անտուն ու անհայրենիք, հայ ժողովուրդ, «Պարսկաստանում՝ խորթ, Հայաստանում՝ խորթ... Հիմա չգիտեմ ինչ անեմ իմ ինքնության հետ կամ ավելի ճիշտ կը լիներ ասել իմ ինքնության բացակայության հետ, ոչ այս եմ, ոչ այն, ոչ ամերիկացի, ոչ հայ, ոչ արեւելքցի, ոչ էլ արեւմուտքցի, մի տեսակ Նանսէնեան ապա-ժամ քաղաքացի, լքել եմ հայերէս, իսկ անգլերէս ասում են բոնա-գրօսիկ է» (էջ 32):

Նուրյանը շարունակ գգում է շեղբի սառնությունը արյան վրա. «Իր հայրը այլեւս հող էր դարձել Թեհրանի հայոց գերեզմանոցում... Հիմա իր գավակներն են ցրուել աշխարհում: Դուտրը՝ Սեդան՝ Սան Ֆրանսիսկո, որդին՝ Վահէն՝ Փարիզ...» (էջ 32):

Եթե Հայաստանում չես, նշանակություն չունի, թե որ երկրում ես ապրում: Ինչպես ամբողջ կյանքն օտար երկրում ապրող Աղամ Նուրյանը, տակավին դրսեցի ես: Գաղթականն ինչ դիրքում էլ լինի ու որքան էլ թվա, թե «... իրեն իրենց դրոյթի մեջ են ընկել, որ Քաղիլաքի մոնչիոնի տակ խլացել է ցեղի ծայնը, մեկ էլ տեսնում ես որ խաբուսիկ են երեւոյթները, որ Իվ Սան Լորան հագուստների տակ նոյն շփոթահար իմիզրանտն է, որը վեհերոտ թակում է հասարակության դուռը, խնդրում եմ բացեք, ես եկել եմ...» (էջ 33): Բայց դու կրկին մենակ ես, իսկ մենակները մոլոր են քայլում...

Ոչ միայն մարդիկ, ժողովուրդներ կան, որ տարտամ են քայլում, վախենում են տեղ չգտնեն աշխարհում: Նրանց քայլվածքում «պարտությունը անտեսանելի փշալարեր է հյուսել»: Եվ միջոց մոլորությունն ու մենակությունը չէ պատճառ, որ քառասունութամյա հայազգի առողջ մտավորականը, ով վաղուց հայերեն չէր խոսել, իսկ հայերը իրեն ձանձրույթ էին պատճառում, մտածում է մահվան մասին ու վարանում. «Երբ մտնեմ, ո՞ր պիտի թաղեն ինձ» (էջ 24) ու իրեն բռնում այն մտքի մեջ, որ ապահով գերեզման հայի համար հենց Հայաստանն է, պապերի «երկիրը Դրախտավայր», չնայած որ հայրենիքը թողել դուրս ելել է ընկել և Հայաստան ձգտել սոսկ պատանեկան երազներում: Աթափ է դեռնա միտքը, և գայիս է պահը, երբ որպես հայ ու որպես մարդ անկեղծ լինի ինքն իր հետ ու իրպեսների հետ: «Ես ինչ եմ տուել Հայաստանին, որպէսզի Հայաստանը ամփոփի իմ դին, փաստօրեն աշխարհում տեղ չունեմ հանգչելու» (էջ 25):

մյուսը Վիեննա, և ինչպես չտրտմի Նուրյանների աշխարհացրիվ գերդաստանի վերջին կաղնին, մայրենիի վաստակաշատ ուսուցչուհին՝ Չուարթ հորաքույրը, ով մայր չի դարձել, բայց բոլորին մայրություն է արել: Եթե ողբերգությունը միայն աշխարհով սփռվելը լիներ, ու հայրությունը տոհմական ավանդույթները, ընտանիքի ամրությունը պահպաներ, դեռ ոչինչ. «Սամուելը Ստոկհոլմում շվեդուհի է առել, գլխին կպնի, Վարդուհին Մադրիդում նշանվել է կուբացի մի դերասանի հետ, գերդաստանը կոտորակվել է, տակնուվրայ եղել...» (էջ 48): Իսկ հարցին, թե Ամերիկա ինչու՞ եկար, - կրկնված, անորոշ, աստանդակաճի պատասխան. «Ի՛նչ իմանամ, յիմարություն, ամեն մարդ Ամերիկա էր գալիս, ես էլ եկայ» (նույն տեղում):

Անհայրենիք է նաև Ադամ Նուրյանի ընտանիքը. կինը՝ Մելինեն, ազգությամբ հայ, բայց հոգով օտար մեկը, ում խեղդում է ամուսնու հայրությունը, գավակները՝ Սեդան ու Վահեն, ովքեր բարեբախտաբար դեռ հայ են ու արժանի շառավիղն են մեծ գերդաստանի: Մելինեն օտարվեց, քանզի ընտանիքը, ուր ինքն էր մեծացել, շահից ու վաստակից բացի ուրիշ հոգս չուներ, իսկ գավակները հայկական ավանդական ընտանիքի շարունակողներ են: Ընտանիքի ու հայկական ոգու փոխանցումը լռելյան է կատարվել, դա հոգևոր կապն է ու գենետիկ ուժը: «Երբ հեռու էր, Նուրենը մտովի կրծքին էր սեղմում գաակներին, իսկ երբ նրանց հետ էր, դառնում էր զուսպ, ողջամիտ ու պառաշահ: Մի օր չեղաւ, որ փաթաթաթուկ էր նրանց, թաց ու տաք համբույրներ դրոշներ նրանց երեսին, հայավարի բացակասություններ արձակել: Գաղտնագողի նախանձում էր միայն հայրերին: Չգիտեր ինչպես հայր լինել» (էջ 130): Չնայած ամուսնական զույգը բաժանվել էր, սակայն գավակների հանդեպ սերն ու հոգատարությունը չէր պակասել: Չավակները ծնողներից ստացել էին մտքի անկախություն ու ինքնաճանաչման գիտակցություն:

Նախնիների հողից շատ ու շատ հեռու, աշխարհի քաղաքակիրթ անկյուններից մեկում, մի հայ պատանի, ով թվում է, թե հայկականությունից հեռու էր լինելու «...արդեն գծել է մեր տոհմի ծառը իր բազմազան ճյուղատրուսներով՝ Ղարաբաղից տարածուելով Երեւան, Մեղրի, Թաւրիզ, Թեհրան, Ժընեւ, Ստոքհոլմ, Լոնդոն, Բէլյուօթ, Ամերիկա և դեռ, Աստված գիտէ, էլ ուր» (էջ 213): Կարևորն այն է, որ երկրաչափական գծերի գլխին պապի պապն է, իսկ ստորին ծայրամասում՝ տոհմի վերջին շառավիղը՝ Վահեն: «Այս բոլորի պատճառը տատիս տատն է եղել, այլապես Նիւ Հէյվընում ծնունդ որդիս ի՛նչ գործ պիտի ունենար Ղարաբաղի հետ» (էջ 212, 216): Եվ հիմա որդին Ղարաբաղի լեռներն է ուզում, համառ է, ճիշտ պապի պես, եթե չի չափա-

զանցրել տատի տատը, երբ տաք թոնրի շուրթին հավաքված իր գավակներին բաներ է պատմել նահատակ ամուսնու՝ տոհմական բանախոսությունից դատելով քաջարի ու համբավավոր Վայրենի Հակոբի մասին: Տատի տատը թոռներին է պատմել, թոռները՝ իրենց գավակներին: Պատմել են երկար ճանապարհների պորունկներին ծվարած, անդունդների մթար խոռոչներում, լուսավոր ու պայծառ մարգագետինների արահետներին ու սոսափող անտառների հովիտ: Պատմել են քարերին, դաշտերին, ծաղիկներին ու աներևույթ ոգիներին: Իսկ պատմությունները ուժ ու կամք են տվել ապրելու: Պատմել են Արցախի ու Սյունիքի մասին, Դավիթ-Քեկի ու Մխիթար Սպարապետի, Թորոսի ու Բայանդուրի, պատմել են նաև տոհմի գլխավորի՝ Վայրենի Հակոբի երևակայական ու իրական սխրանքների մասին, և այդ պատմությունները, դարաբացցիներին հատուկ վառ երևակայության թովով անցնելով, առասպելական տարածք են ստեղծել ու եկել դարձել կամք ու բնավորություն:

Ամուր է հայկական ընտանիքը, հավատարիմ է ակունքներին, օրինավոր է ու արժանապատիվ: Դեռևս Հայկ Նահապետն իր հետ տարել է ուստրերին ու դուստրերին, ընտանիքի շուրջն է ստեղծել տոհմ ու երկիր: Հայի համար սրբություն է իր ընտանիքը, հիշողության ծայքերում պահված նախշուն մի գորգ, որի յուրաքանչյուր հյուսքն ու գույնն աննշմարելի, բայց կայուն դիմագիծ են հաղորդում անգամ վերջին շառավիղին:

Ամերիկայում ծնված ու հասակ առած հայազգի տղան «մատիտը վերցրել ու Ղափանը կապել է Ղարաբաղին, հոջակել է Ղարաբաղի իշխանություն, մայրաքաղաքը՝ Գանձակ: Առանց Ղարաբաղի Հայաստան չի լինի, որովհետև Ղարաբաղը Հայաստանի գլուխն է» (էջ 216):

Ընտանիքի շարունակականության երաշխիքը տոհմական հիշողությունն է, որ խնամքով փոխանցվելու է սերնդից սերունդ: Յուրօրինակ դավանանք է հայկական ընտանիքը, այն սերունդների դաստիակակության քուրան է ու ազգի պահպանման հիմքը, դարձդարձիկ շավիղներում լուսարձակող ջահ է ու առասպելական ասք, որ վեճի մեջ է մտել մթար ժամանակների մոլորության դեմ, անդունդների երախներում թաղել իր վիշտն ու ցատումը՝ անաղարտ պահելով հայի ամենամեծ ձեռքբերումն ու խտացված իմաստությունը՝ ընտանիքը:

Բանալի բառեր: Ընտանիք, հիշողություն, ազգային, ավանդույթ, տոհմ, հայկական, կենսագրություն, գավակներ, տատ, ապուպապ, սերունդ:

Հայաստանը հաճախ միայն հայկական կոնյակ էր, շրջագայելու հարմար երկիր կամ լավագույն դեպքում՝ հյուրընկալ բարեկամներ ու ծանոթներ: Սակայն ազգի մաքուր գեներ բարեբախտաբար փչվել է կարող և արթնանում է ամեն հայի մեջ, ավանդ, շատ հաճախ, երբ սեփական մենակությունը դառնում է շրջափելի:

Ցավալի է, երբ ապահով գերեզման ունենալու փնտրտուրից է, որ Հայաստան են հիշում, և կրկնակի ցավ, երբ աննշան անփական անձի ու ընտանիքի ողբերգությանը, նոր են մտաբերում հայկական ավանդական կապերի պահպանման անհրաժեշտությունը: Վեպի կենսագիր հերոսը նախատում է ինքն իրեն. «Միթե մոռացել ես, թե ինչպես էի Հելվեթի կենտրոնական հրապարակում պաշտպանում էի կանանց համահասարակ իրաւունքների դատը, բայց երբ Մեյիլենը որոշեց նոր կեանք ստեղծել, տնտեսության բնութագրեցիք նրա քայլը, հայկական ավանդության խախտում» (էջ 26): Կնոջ հեռանալուց հետո Նուրյանը որոշել էր հաշվի նստել իր հետ: Քայլում էր դատարկ սենյակներում և զարմանում, որ այնտեղ տարիներ շարունակ իրեն թվացել էր, թե սերն ու փոխադարձ ըմբռնումն է իշխում: Մեյիլենը հափշտակել էր տան կահույքը, իրեն թողնելով մի խարխուլված մահճակալ, մի սեղան, մի աթոռ ու դառը իրականություն: «Այդ էլ թեզ հայ կին: Գունձ ձեռքից չտայ բնակարանը: Մի օր կը ծախի եւ դրամը կը բաժանի չափահաս երկու զաւակների միջեւ» (էջ 6):

Տոհմի ու ընտանիքի կենսագրությունն ազգի պատմության մասն է, սակայն Կարապետի վեպում չի վերածվում ազգագրության: Այն ավելի քան մարդու պատմություն է, հոգեկան կապվածության, հուշի ու ընտանեկան օջախի, ապուպայերի ու զավակների չընդհատվող շրջափառ շարունակականություն, որը տանակ հիշեցնում է իր ու վիճելն ու արյան ծագումնաբանությունը: Հենց այս է գեղի ու գերդաստանի կենսագրությունը դարձնում տունտուտի զգացողություն՝ բոլոր դժվար պահերին հիշեցնելով միևնույն սպառնալից պատասխանը, ըստ որի՝ ամենակարևոր բանը, որ ունի մարդը, և հանուն որի արժե ապրել՝ իր տունն է, իր զավակն ու ընտանիքը, հիշողության ծայրերում խնամքով թաքցրած տոհմական խմբակարգը, ուրվագծված՝ որպես սուրբ մասունք:

Ընտանիքի ու զավակների բարեկեցության ու ապահովության հոգս է, որ Նուրյանի մանկության ընկեր Բարսեղենց թոռ Վանուշին՝ Վահան Հայրապետյանին, երևանցի կնոջը՝ Փառանձեմին, ու տասը-տասնչորս տարեկան երկու զավակներին՝ Վահագնին ու Անիին, Ամերիկա է բերել: Հանուն ընտանիքի վառ ապագայի հայի տեսակը չի վախենում դժվարություններից: Վահանը եզակի մեկը չէ, ով համոզված է, որ «կա ապագա», և ազգը լեզուն, հողն ուրանալով, միայն

նյութական ու ֆիզիկական ապահովագրությամբ կփրկի ընտանիքի ու գերդաստանի պատիվը: Անգամ, երբ Վահանն ինքն էլ է համոզվում, որ օտար ափերում երջանկություն մուրալ չի լինի, շարունակում է ինքն իրեն խաբել, գուցե չնկատելով, որ Անին ծերացած մանուկի կերպարանք է ստացել, Փառանձեմը դժգոհ է մաշող մենակությունից՝ թեկուզ ոսկի թափեն փողոցներում, իսկ Վահագը «ես իմ անուշ Հայաստան»-ին չնայած ջրի պես գիտի, բայց բառերը խեղդում են կոկորդը ու հեկեկում է անբացատրելի կարոտացավից: Սակայն ինքն իրեն սփոփում է, ինչպես շատերը, ինչպես բոլորը. «շուտով կը վարժուես, մարդ ասածը ամեն բանի կը վարժուի... էս ամենը ժամանակատր ա...» (էջ 45): Կվարժվեն... բայց ինչ գնով: Իրենք իրենց կորցնելու գնով, մենակություն վաստակելու ու կարոտից միշտ թացվող այցեր վաստակելու գնով: Գուցե մի օր Վահանի նմանները հասկանան կամ բնավ էլ չհասկանան «որ հայը միշտ էլ չարչի կմնա համաշխարհային շուկայի լուսանցքում ձվարած»: Փառանձեմների արցունքները կցամաքեն հարկավ, իսկ Վահագներն ու անիները կմեծանան, շիտակ սփյուռքահայեր կդառնան ու կսփոփվեն հայրենիքի, ազգի ու լեզվի պահպանման համար դրամական բարեգործություն կատարելով, օտար ափերից կսփրեն Հայաստանն ու կպարծենան. «Լսեցիր, թոռս հայերեն բարեւ ըսավ» (էջ 41):

Երբ ենք խելքի գալու... «Երեկոյեան ամեն ոք գործից իր տունն է գնում, մենք մեր տնից փախել, աշխարհի փողոցներն ենք չափչփում, Բուվլեթում եկեղեցի են կառուցում, մաղազասկարում վեց հոգի հաւարուել Հայոց Ակումբ են հիմնում» (Նույն տեղում):

Վահանները չեն կարող հանդուրժել սեփական երկրի ու տան իրենց համար անցանկալի պայմանները. «Շատ հեշտ ա նստել Ամերիկայում ու քննադատել եկողներին, դու սկի ծանձօք ես պայմաններին, տուրիստ գալը տարբեր բան ա, հաց աշխատելը տարբեր բան, բերնիդ պատառը խլում են քեզնից, ես այստեղ լավ պայմաններ կստեղծեմ...» (էջ 40): Լավ պայմաններ թոռ տանն ու թոռ երկրում ստեղծիր, թորդ պատառը բերնիցդ խլեն, բայց հողդ ու տունդ թունը լինի, իսկ որդիներդ այցերի կայծը չմարի ցավից ու անհույս կարոտից: Ընտանիքիդ բարեկեցությունը միայն երեխաներիդ կուշտ փորը չի, այլ որ ամենակարևորն է, նախնիներիդ հիշողության, ավանդական ընտանիքի ու ազգային արժեքների պահպանումն է ու փոխանցումը ապուպայերից թոռուծոռներին:

Նուրյանների անվանի գերդաստանն էլ է, Թաջիր Հովակիմի գավակները, Դարաբաղի Մեխիբերի անմիջական շառավիղը՝ «դիրք և ֆատնով, գրեթե ազնվական», ցրվել աշխարհով մեկ, մեկը Փարիզ,

Summary

Naira Khachatryan

PhD in Philological Sciences, Associate Professor

NATIONAL MEMORY AS A BASIS FOR MAINTAINING FAMILY IN THE NOVEL "THE BOOK OF ADAM" BY HAKOB KARAPENTS

The guarantee of continuity of the family is the ancestral memory that will be carefully passed down from generation to generation. Though biography of the clan and family is part of nation's history, it does not turn into ethnography in autobiographical novel "The Book of Adam" by Hakob Karapents. It is more than a story of a man, mental affection, memory and a family hearth, an unbroken chain of continuity of great-grandfathers and children, which clearly reminds who he is and his blood lineage. Some families presented in the novel of Karapents have deviated from traditional Armenian national customs, which is a tragedy in itself. No matter how fashionable the society becomes at the request of the times, the return to the roots will sooner or later take place; it is a claim to live.

The Armenian family is a unique religion, it is a furnace of the upbringing of generations and the basis of nation's preservation, it is a torch that shines in variable paths and a mythical story, that got into a dispute against the delusion of the dark times, buried his grief and anger in the vents of the gulfs - keeping pure the greatest achievement and the concentrated wisdom of the Armenians - the family.

Keywords: family, memory, national, tradition, clan, Armenian, biography, children, grandmother, great-grandfather, generation.